

# ԳՈՒԹԱՆ

## ՀԱՆԴԵՍ


ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ՀԻՄՆԱԴԻՐ-ՏԵՕՐԷՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

Աշխատակիցներ Ֆրանսացի ու հայ ծանօթ Գիտուհներ  
և Մասնագետներ.




## ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԳՈՒԹԱՆԸ պիտի շարունակուի, նոյնիսկ դժուարազան զոհաբերութիւններով. մինակ Հայ Գիտական Թերթն է, որ կրնայ բոլոր թէ ունի ոչ միայն հայ սակաւաթիւ ընտրեալ աշխատակիցներ այլ և Ֆրանսացի նշանաւոր և ծանօթ Գիտուհներու և Մասնագետերու խումբ մը որ միշտ պատրաստ է իրեն բարոյական և մտաւորական աջակցութիւն ապրու. կը մնայ լոկ նիւթականի հարցը. լուծուած պիտի համարինք զայն, եթէ մեզի պարտք ունեցող Բաժանորդները վճարեն իրենց պարտքը, և վճարողները Նոր Շրջանին հաճին Բաժանորդ մնալ :

ԳՈՒԹԱՆԻ հրատարակութեան ձեռնարկեցինք լոկ եղբայրասիրական և մարդասիրական զգացումներէ մղուած երկրին ու մեր նմաններուն իրական և դրականի օգուտները ստանալու գիղեցիկ հաւատքովը արիացած :

AV



ԳՈՒԹԱՆԸ խանութ չի ներու, հարստութիւն դիզելու, կամ ապագայ ապահովելու նպատակով եթէ հաստատած ըլլայինք, ուրիշներու նման մի քանի թիւ հրատարակելէ յետոյ կը գաղբեցնէինք, ընդհակառակը մենք անկարելութիւններով ամբողջացուցինք բոլոր պակաս թիւերը ու աշխարհի գանազան կողմերէ մեզի դիտական եւ արուեստական հարցերու վրայ խորհուրդ հարցնող նամակներուն միայն պատասխանելու համար ալ 400 Փրանքի մօտ գումար մը ծախսեցինք մինչդեռ մեր արդար պահանջին  $\frac{1}{6}$  բոլոր հազիւ գանձած ենք:


ԳՈՒԹԱՆԻ խմբագրութիւնը հետադարձ իւր հրատարակաւ ըրած խոստմանը, պիտի շարունակէ թերթի հրատարակութիւնը միջեւ այն օրը, երբ իւր բոլոր ոյժերը դադրին. այն հաստատուն հաւատքովը որ մինչեւ այդ օրը շատ բան սորվեցուցած կըլլայ հայ գիւղացուն ու անշուշտ մինչեւ այդ օրը կելլեն բախտաւոր նոր ոյժեր ու կը շարունակեն Գութանը լաւագոյն պայմաններով:

Մեր ամենախորին եւ ջերմագին շնորհակալութիւնը կը յայտնենք մեզ վճարող բաժնորդներուն, որոնք հակառակ ԳՈՒԹԱՆԻ անկանոն հրատարակուելուն եւ Ա. Շրջանին այսքան երկարելուն վայրկեան մը իսկ չի կասկածեցան մեր բարի տրամադրութեանց վրայ ու գինգ փոխանակ վերաւորելու քաջալերեցին գեղեցիկ խօսքերով:

ԳՈՒԹԱՆԻ Բաժնեգները մինչեւ հիմա չի վճարողները որոնք գուցէ կը կասկածէին թէ 12 Համարը չենք աւարտեր եւ իրենց քանի մը Փրանքը կը կորսուի, ալ ժամանակ է որ փութան իրենց պտրաքը հատուցանել:

ԳՈՒԹԱՆԻ Բաժնեգինը ուտել ուզողները թող դիտնան որ իրենց անունը մեկ երկու անգամ Գութանի մէջ խայտառակելով չի պիտի դոնանանք, մեր բոլոր հրատարակութիւններուն պիտի կցենք իբր յաւելուած ԳՈՂՆԵՐ վերնագրի տակ իրենց անուանց ցանկը մինչեւ որ օրէնքն ու արդարութիւնը մեր թերթերու եւ Հանդէսներու համար ալ մասնաւոր դատարան մը հաստատեն, որուն կարողանանք գիմել ու մեր իրաւունքը պահանջել ուրիշ պարտապահանջներու պէս մեր պարտատերերէն:

ԳՈՒԹԱՆԻ խմբագրութիւնը թերթը աւելի ժողովրդացնելու նպատակով որոշած է զուտ գիտական բաժնին աւելի ընդարձակ տեղ մը տալ, առանց վնասելու երկրագործականին:



ԳՈՒԹԱՆԸ պիտի հրատարակէ այս շրջանին մէջ, եթէ քաջալերութիւն զանէ, մաս առ մաս, մեր գաւառական եւ թաղային վարժարաններու համար բնական գիտութեանց, Տարրաբանութեան եւ բնագիտութեան դասեր, որոնց շնորհիւ եւ 20 ֆրանքնոց աշխատանոցով մը ուսուցիչը պիտի կրնայ իւր աշակերաններուն գիտութիւնները գործնական եւ փորձառական մեթոտներով հասկցնել, ինչ որ չեն կրցած ընել մինչև հիմա մայրաքաղաքի թութակ պատուելիները. ԳՈՒԹԱՆԸ հայ գիւղացին եւ երկրագործը հետաքրքրող լուրերու քաղուածքներ պիտի ընէ բոլոր հայ թերթերէ :

ԳՈՒԹԱՆԻ խմբագրութիւնը իրեն եղած երկրակործական հարցերուն կը պատասխանէ մասնաւոր նամակներով :

ԳՈՒԹԱՆԻ բաժանորդները այս շրջանին մէջ պիտի ստանան « Գութանի Մատենադարան » հրատարակութիւնները կես ԳՆով :

ԳՈՒԹԱՆԻ խմբագրութիւնը Բ. Շրջանին մէջ զանազան հարցեր մրցման պիտի դնէ. լաւագոյն դատուած գրութիւնը պիտի ստանայ Մրցանակը որուն արժէքը քսան ֆրանքէն պակաս չի պիտի ըլլայ, ( տես թիւ 1 ) շրջան :

ԳՈՒԹԱՆԻ հին շրջանի բոլոր թիւերը հրատարակուած են եւ պիտի զրկուին :

ԳՈՒԹԱՆԻ պակաս թիւերը մեր բաժանորդները կրնան պահանջել մեզմէ մինչև օգոստոսի վերջը :

ԳՈՒԹԱՆԸ նոր շրջանին մէջ առաւելութիւն մ'ալ պիտի տայ իր բաժանորդներուն, անոնց զրկելով մէկ մէկ քիչ լաւագոյն սերմերէն ու հունդերէն (ցորենի, բանջարի կանանչներու, ծաղիկներու եւ այլն) որոնց շնորհիւ եւ առանց ծախքի կրնան փոխել իրենց սերմերը :

Մեր բարեգործերուն ահաւասիկ նոր ասպարէզ մը բարեգործութեան :

ԳՈՒԹԱՆԻ նոր շրջանին պիտի սկսինք քիչ օրէն :

ԳՈՒԹԱՆԻ բաժանորդագրութիւնը բացուածէ, բաժանիկները զրկել խմբագրութեան նոր հասցէին .

K. Médzadourian. 53, rue Boulard. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՒԹԱՆԻ	12 ԹԻՐ	ԿՐ	ԿԱԳՄԻՆ	ՄԷԿ ՇՐՋԱՆ
Արտասահմանի համար	12 ԹԻՐ	12	Ֆրանք 6	ԹԻՐ 6 ֆր.
Տաճկաստանի	«	«	10	«
Պարսկաստանի	«	«	10	«
Րուսիոյի	«	«	5	Րուպլի
Կովկասի	«	«	5	«
Ամերիկայի	«	«	3	Տոլար
				« 1 1/2 Տլ.

ԳՈՒԹԱՆԸ մուտք ունի ամէն երկիր.

ԳՈՒԹԱՆԻ ԼՈՐ ՇՐՋԱՆԻ Բաժանորդագրութիւնը բոլորովին Կ Ա Ն Ծ Խ Կ Ե .

Երկրագործական եւ գիտական գրքոյքներու եւ գրքերու շարք մը կայ պատրաստ ապագրութեւն :

Ձեռագրները կը ծախուին չափաւոր գներով ընկերութեամբ տպել ալ յանձն կանուռի :

Դիմել Գութանի Խմբագրութեան :

Այս շրջաբերականը ձեռքէձեռք անցնել եւ շտապած էլ կը խնդրուի :

Կը խնդրուի հայ թերթերէ տպագրել եւ բաժանորդագրութեան պայմանները :

Մամուլ տակ է Տ . Գարեգին Մեծատուրեանի :

ՇԵՐԱՄԱԲՈՒԾԻ ԳՐԱՅԵՆ

Գին 2 ֆրանք :

Շատ թիւով գնողներուն համար կարելու է զիմել :

Մ. Ս. ԳԱԻԹ-ԲԷԿ 4, r. Ortolan. PARIS

ՄԱՆՈՒՄ . — Այս շրջաբերականը մատուց սակ դրուած պահուն իւսացանք որ, Թրանսկերեկ շեզուով հրատարակուած հայ անասերքի մը խմբագիրը, ընթանկով Գութանի նկատ երկրագործական եւ գիտական հանդէսի մը անկրամէշս պիտի եւ անասնունս օգտախորտիւնը, խորիկ ցմեով մը յայտարարուած է, անշուշտ սիսայ հանկացողութեանը, թէ Գութանի հրատարակութիւնը զայրուած է .

Գութանի հանկարող յիշեալ պ. խմբագրին այս անո՞ս յուրիկ անքիւր ոչիկն չեկն հարողուած իրեն եւ ոչ ալ իկնք մեզ ղիւսած է իր անիկ յուրերը անշուշտ անպատկով :

ԳՈՒԹԱՆԻ հրատարակութիւնը կը շարունակուի եւ պիտի շարունակուի :